Դեկտեմբերի 29-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ մարզի խորհրդի 2016 թվականի ամփոփիչ նիստը: Նիստին մասնակցում էին մարզի 75 համայնքների ղեկավարները: Նիստը վարում էր ՀՀ Շիրակի մարզպետ Հովսեփ Սիմոնյանը: Օրակարգում ընդգրկված էին չորս հարց և բյուջեների սեփական եկամուտների կատարման մասին զեկուցումով առաջին հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյանը: Զեկույցը ստորև:

2016թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 87.9%-ով, նախատեսված 1,976,208.3 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 1,736,651.9 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 239,556.4 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2016թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ բյուջեների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2016թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	378,058.3	317,544.1	- 60,514.2	84.0
Գույքահարկ	774,259.4	730,364.0	- 43,895.4	94.3
Պետական տուրք	50,586.0	44,219.2	- 6,366.8	87.4
Տեղական տուրք	132,885.0	113,626.5	- 19,258.5	85.5
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	339,060.5	277,312.4	- 61,748.1	81.8
ա/ հողի վարձավճար	295,309.7	231,951.6	- 63,358.1	78.5
բ/ գույքի վարձավճար	43,750.8	45,360.9	1,610.1	103.7
Այլ եկամուտներ	301,359.1	253,585.6	- 47,773.5	84.1
Ընդամենը սեփական եկամուտներ	1,976,208.3	1,736,651.9	- 239,556.4	87.9

2016թ. 12 ամիսներին փաստացի հավաքագրվածի նվազման %-ը 2015թ. 12 ամիսների փաստացի հավաքագրվածի համեմատությամբ կազմում է 5.0% կամ 2015թ. համեմատությամբ պակաս է հավաքագրվել – 92,055.4 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2016թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Արթիկ	261 173,4	246 413,8	-14 759,6	94.3
2	Ախուրյան	348 504,2	287 759,1	-60 745,1	82.6
3	Անի	150 415,4	121 596,8	-28 818,6	80.8

4	Աշոցք (թվով 11 համայնք)	51 018,5	40 067,9	-10 950,6	78.5
5	Ամասիա (թվով 9 համայնք)	43 484,3	31 291,0	-12193,3	72.0
6	Սարապատ (թվով 15 համայնք)	31 928,6	21 481,6	-10 447,0	67.3
7	Արփի (թվով 9 համայնք)	37372,6	23048,66	-14323,9	61.7

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2016թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արփի համայնքի փունջը՝ 61.7%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 78.9%:

Մարզի քաղաքային համայնքները 2016թ. սեփական եկամուտները կատարել են՝ Գյումրի քաղաքը՝ 91.7%, Արթիկ քաղաքը՝ 95.8%, Մարալիկ քաղաքը՝ 98.4:

Մարզի թվով 37 համայնքներ չեն ապահովել 2016թ. արձանագրված սեփական եկամուտների կատարման միջին ցուցանիշը՝ 87.9%-ը, իսկ թվով 3 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը:

Մարզի համայնքների կողմից բյուջեների եկամուտների հիմնական ցուցանիշ համարվող հողի հարկի հավաքագրման մակարդակը 2016թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ կազմել է 84.0%, կամ նախատեսվածից պակաս է հավաքագրվել – 60,514.2 հազ. դրամ: Փաստացի հավաքագրվածի նվազման %-ը 2015թ. համեմատությամբ կազմել է 6.2%-ով, իսկ գումարային նվազումը կազմում է - 21,028.4 հազ. դրամ:

Մարզի համայնքների կողմից բյուջեների եկամուտներում նախատեսված գույքահարկի հավաքագրման մակարդակը 2016թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ կազմել է 94.3%, կամ նախատեսվածից պակաս է հավաքագրվել 43,895.4 հազ. դրամ: Փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2015թ. համեմատությամբ աճել է 1.2%-ով, իսկ գումարային աճը կազմում է 8,361.4 հազ. դրամ:

2016թ. ընթացքում հողերի վարձավճար կատարվել է 78.5% -ով, կամ պակաս է գանձվել – 63,358.1 հազ.դրամ:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

ՀՀ պետական բյուջեով 2016 թվականին նախատեսված 4,379,618.1 հազ. դրամ դոտացիան ամբողջությամբ ֆինանսավորվել է:

ՀՀ Շիրակի մարզի համայնքապետարանների և ենթակա հիմնարկների աշխատավարձերի պարտքը 2016 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ կազմել է 3,741.9 հազ. դրամ, այդ թվում Հովունու համայնքապետարան՝ 1703.7 հազ. դրամ /եկամտահարկի գծով/ և Լուսաղբյուրի համայնքապետարան՝ 2,038.2 հազ. դրամ /վերջնահաշվարկ/:

2017 թվականի տրամադրվելիք դոտացիաների մասին

ՀՀ պետական բյուջեով 2017 թվականին նախատեսվել է տրամադրելու 4,413,338,7 հազ. դրամ դոտացիա, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 211,212.9 հազ. դրամով:

Մարզի խոշորացված համայնքներում կատարված աշխատանքների ու առաջիկա անելիքների մասին զեկուցեց՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ՝ Արամ Անտոնյանը:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի հունիսի 17-ի №ՀՕ-100-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ մարզի Ամասիայի և Աշոցքի նախկին վարչական շրջաններում ընդգրկված 44 համայնքների խոշորացման արդյունքում կազմավորվել են թվով 4 համայնքներ՝ Ամասիա, Աշոցք, Արփի և Սարապատ: Ամասիա համայնքում ներառված են նախկին վարչական շրջանի թվով 9, Աշոցք համայնքում՝ 11, Սարապատ համայնքում՝ 15 և Արփի համայնքում՝ 9 համայնքներ:

2016 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքում նշված համայնքներում կազմավորվել են համայնքների ավագանիներ և ընտրվել են համայնքների ղեկավարներ:

Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը՝ 2016թ. հոկտեմբերի 8-ին, «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի համաձայն, միավորված 44 համայնքների

տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները համարվել են դադարած և այդ նույն օրը խոշորացված համայնքներում ընտրված համայնքների ղեկավարներն ստանձնել են իրենց պաշտոնները, իսկ համայնքների ավագանիներն՝ իրենց լիազորությունները:

Համայնքների ղեկավարների լիազորությունները ստանձնելուց հետո խոշորացված համայնքներում կազմակերպվել են համայնքների գույքի և փաստաթղթերի հանձնման–ընդունման աշխատանքները:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն կայացել են խոշորացված՝ Ամասիա, Աշոցք, Արփի և Սարապատ համայնքների նորընտիր ավագանիների նիստերը, որոնցում ընդունվել են համայնքապետարանների աշխատակազմերի գործունեությունն ապահովելու վերաբերյալ անհրաժեշտ որոշումներ:

Մասնավորապես հաստատվել են՝

1. Համայնքների ավագանիների կանոնակարգերը,
2. Համայնքներում հանրային բաց լսումների կամ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը,
3. Համայնքների կազմերում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցիչների թեկնածությունները ներկայացնելու և համաձայնեցնելու կարգերը,
4. ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամին համայնքներում ներդրումային ծրագրեր ներկայացնելու նպատակով ստեղծվող նախաձեռնող խմբերի կազմերը,
5. Ստեղծվել են «Համայնքապետարանների աշխատակազմեր» համայնքային կառավարչական հիմնարկներ, հաստատվել են դրանց կանոնադրությունները, հաստիքացուցակները, աշխատակիցների թվաքանակներն ու պաշտոնային դրույքաչափերը,
6. Սահմանվել են վարչական ներկայացուցիչների նստավայրերը,
7. Հաստատվել են համայնքների բյուջեները,
8. Քննարկվել են նաև այլ հարցեր:

Ավագանիների որոշումներով խոշորացված համայնքների մեջ ներառված նախկին համայնքապետարանների աշխատակազմերի գործունեությունները դադարեցվել են: Իսկ նոր ստեղծված համայնքային կառավարչական հիմնարկները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվել են իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից և ձեռք են բերել կնիքներ:

Համայնքների խոշորացման արդյունքում՝

Նախկին թվով 44 համայնքապետարանների աշխատակազմերում առկա 232 հաստիքի փոխարեն ներկայումս նախատեսված է 158 հաստիք, կրճատվել են 74 հաստիքներ, ամսական կտնտեսվի 5215,0 հազ. դրամ կամ տարեկան 62580,0 հազ դրամ:

Հաշվի առնելով համայնքների կազմերում ընդգրկված բնակավայրերում իրականացված հանրային քննարկումների արդյունքները, համայնքների ղեկավարները կողմից, խոշորացված 4 համայնքների թվով 38 բնակավայրերից 34-ում արդեն իսկ նշանակել են վարչական ներկայացուցիչներ, մյուս 4-ում (Զույգաղբյուր, Կարմրավան, Զարիշատ և Ալվար) նշանակումներ կկատարվեն առաջիկայում:

Արդեն իսկ հաստատված են Աշոցք, Սարապատ և Արփի համայնքների հնգամյա զարգացման ծրագրերը, իսկ Ամասիա համայնքում ընթացքի մեջ են ծրագրի քննարկման և հաստատման աշխատանքները:

ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից խոշորացված համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերը հաստատվելուց հետո մարզպետարանի կողմից կտարվեն հետևողական աշխատանքներ, նշված համայնքներում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման և թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթների հայտարարման, դրանց հրապարակայնության ապահովման և մրցույթների պատշաճ անցկացման համար:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ համայնքներում ընթացող բոլոր գործընթացներում համայնքների նորընտիր ղեկավարներին մարզպետարանի աշխատակազմի կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցություն:

Հարգելի պարոն մարզպետ, օգտվելով առիթից ցանկանում եմ մարզի բոլոր համայնքների ղեկավարներին առաջարկել՝

1. Միջոցներ ձեռնարկել համայնքապետարանների աշխատակազմերում կադրային գործի վարման ուղղությամբ տարվող աշխատանքներն ու համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված

գործառույթները լիարժեք և արդյունավետ իրականացնելու, համայնքներում բազմիցս արձանագրված թերությունների և բացթողումների դեպքերը հետայսու բացառելու ուղղությամբ:

2. Ամենօրյա աշխատանք տանել համայնքապետարանների աշխատակազմերում իրականացվող գործավարության և փաստաթղթաշրջանառության ուղղությամբ տարվող գործընթացների բարելավման ուղղությամբ: Ավագանու նիստերը հրավիրել օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ապահովել ավագանու բոլոր որոշումների առաքումը մարզպետարան, ինչպես նաև ավագանու որոշումների վերաբերյալ մարզպետարանի կողմից ներկայացված առարկություններին պատասխանել սահմանված կարգով և ժամկետներում:

3. Աշխատանքներ տանել համայնքներում զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանների վարումը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

4. 2016 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում գործուն աջակցություն ցուցաբերել զինվորական կոմիսարիատներին:

2016 թվականին մարզում իրականացված շինարարական աշխատանքների մասին զեկուցումով հանդես եկավ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ Ալբերտ Մարգարյանը:

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2016թ. պետական բյուջեով ՀՀ Շիրակի մարզին հատկացվել է 880.312մլն դրամ գումար որից՝

- Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանային ապահովման նպատակով՝ Ախուրյանում 3 անավարտ շենքերի կառուցման համար հատկացվել է 798.000 մլն դրամ գումար: Շահագործման են հանձնվել 104 բնակարան: Աշխատանքներն ավարտվել են:
- Սպանդարյան համայնքի միջնակարգ դպրոցի պատուհանների փոխարինման համար հատկացվել է 10.0 մլն դրամ գումար: Աշխատանքներն ավարտվել են:
- Գյումրի քաղաքի Կարա Մուրզայի անվան երաժշտական քոլեջի ջեռուցման համակարգի անցկացման համար հատկացվել է 15.0 մլն դրամ գումար: Աշխատանքներն ավարտվել են:
- Գյումրու Ս. Մերկուրովի տուն-թանգարանի հիմնանորոգման շինարարական աշխատանքների համար հատկացվել է 35.0մլն դրամ գումար: Աշխատանքներն ավարտվել են:
- Սպանդարյան համայնքի մշակույթի տան մասնակի վերանորոգման աշխատանքների համար հատկացվել է 22.312 մլն դրամ գումար: Աշխատանքներն ավարտվել են:

ՀՀ կառավարության 2016թվականի մարտի 31-ի N 330-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել է 18.8 մլն դրամ գումար՝ Իսահակյանի դպրոցի շենքի հրդեհված տանիքի կառուցման համար: Աշխատանքներն ավարտվել են:

ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի N 663-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել է 41.746 մլն դրամ գումար՝ Արթիկ համայնքում հեղեղումների հետևանքով վնասների վերացման նպատակով, այդ թվում.

- Արթիկի համայնքում հեղեղումների հետևանքով վնասված շենք-շինությունների բնակիչներին աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ 22,350 մլն դրամ,
- Արթիկի համայնքում հեղեղումների հետևանքով անկած գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի ցանքատարածություններին պատճառված վնասի դիմաց աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ 2,430 մլն դրամ,
- Արթիկի համայնքի հեղեղատարների մաքրման նպատակով՝ 16,965 մլն դրամ: Աշխատանքներն ավարտվել են:

<<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի /ԻՖԱԴ/ կողմից 2 փուլով ՀՀ Շիրակի մարզում իրականացվում են համայնքների ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքներ՝

- 1-ին փուլում թվով 9 համայնքներում / Սառնաղբյուրի համայնքում գազաբաշխիչ ցանցի ընդլայնման և թվով 8 համայնքների ջրամատակարարման ցանցերի բարելավման/ նախատեսվել է 1295.0 մլն դրամ գումարի աշխատանքներ: Աշխատանքներն ավարտված են:
- 2-րդ փուլում թվով 6 համայնքներում նախատեսվել է 1580.0 մլն դրամ գումարի աշխատանքներ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՀՀ տարածքային զարգացման հիմադրամի միջոցների հաշվին մարզի թվով 10 համայնքներում իրականացվում են 1478.3 մլն դրամի աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի միջոցներով՝ Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի կողմից ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով, մարզի թվով 9 համայնքներում իրականացվում են 1376.0 մլն դրամ գումարի աշխատանքներ:
ՀՀ պետական բյուջեի միջոցներից ՀՀ ոստիկանությանը հատկացվել է 1100,0 մլն դրամ գումար՝ Գյումրի քաղաքում <<Կումայրի>> ոստիկանության բաժնի կառուցման
աշխատանքների համար, որից 2016 թվականին իրականացվել է 660.0 մլն դրամի աշխատանքներ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
Անհատական ներդրումների հաշվին իրականացվել են 3000.0 մլն դրամի աշխատանքներ:

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզն ունի է 114.2 կմ միջպետական նշանակության, 218.0 կմ հանրապետական նշանակության և 461.1 կմ մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ:

2016 թվականին մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հատկացվել է շուրջ 500.0 մլն դրամ գումար: Հատկացված գումարով իրականացվում են 311.4 կմ երկարությամբ ձմեռային պահպանման և 296.2 կմ երկարությամբ ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ:

Մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել է 116,0 մլն.դրամ գումար: Հատկացված գումարով իրականացվում են 186.8 կմ երկարությամբ ձմեռային պահպանման և 28.0 կմ երկարությամբ ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքներ:

ՀՀ Շիրակի մարզում 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հատկացված 395.0 մլն դրամ գումարով վերանորոգվել են Հ-83, Հ-21 Արթիկ-Պեմզաշեն-Մ-1 հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Մ-1-Պեմզաշեն 1.5 կմ երկարությամբ հատվածը (119.1 մլն. դրամ), Հ-21, Հ-75-Հոռոմ-Արթիկ-Ալագյազ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի 0.6 կմ երկարությամբ հատվածը (80.0 մլն. դրամ) և միջպետական նշանակության Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Գյումրի-Բավրա 13.5 կմ երկարությամբ հատվածը (195.9 մլն. դրամ);

Կենսական նշանակության ճանապարհների վերականգնման ծրագրի շրջանակներում հիմնանորոգվում է նաև Մարալիկ–Քարաբերդ-Ձիթհանքով մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհը 11.0 կմ երկարությամբ (շուրջ 1.43 միլիարդ դրամ): Աշխատանքները կավարտվեն 2017 թվականին:

2016 թվականին հունիսի 22-ին սկսվել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Լանջիկ-Գյումրի հատվածի կառուցման շինարարությունը (Տրանշ 3):

Ընդհանուր առմամբ՝ 2016 թվականին մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազմում է 2441.0 մլն. դրամ (առանց «Հյուսիս-հարավ ճանապարհի):

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մարզում գործում են 75 ներմարզային՝ 24 ավտոբուսային և 51 միկրոավտոբուսային երթուղիներ, որոնք սպասարկվում են 14 ուղևորափոխադրող կազմակերպությունների
կողմից: Սպասարկման գործում ընդգրկված են 122 տրանսպորտային միջոցներ (ավտոբուսներ՝ 40, միկրոավտոբուսներ՝ 82)

Այժմ չեն սպսարկվում 3 միկրոավտոբուսային երթուղիներ: Ուղևորահոսքի պակասի պատճառով Սարապատ և Արփի համայնքները սպասարկող N: 07-051՝ Գյումրի-Սալուտ-Բաշգյուղ-Փ.Սարիար-Կաքավասար-Սարապատ-Ձորաշեն և հետադարձ, N: 07-054՝ Գյումրի-Թորոսգյուղ-Գոգհովիտ-Հողմիկ և հետադարձ և N: 07-061՝ Գյումրի-Ամասիա-Բերդաշեն-Ձորակերտ-Ծաղկուտ-Գառնառիճ-Շաղիկ և հետադարձ ներմարզային միկրոավտոբուսային երթուղիները համարվում են ոչ շահութաբեր: Մինչ օրս 11 անգամ հայտարարված մրցույթներին մասնակցության հայտեր չեն ներկայացվել: Երթուղիների մեկ ուղևորի փոխադրման սակագինը նախկինում կազմել է շուրջ 500-1000 դրամ (ելնելով համայնքի մարզկենտրոնից եղած հեռավորությունից):

Այժմ երթուղիների սպասարկման համար հատարարվել է նոր մրցույթ, որը կկայանա 2017 թվականի հունվարի 17-ին:

Մարզում գործում են նաև 17 միջմարզային՝ 3 ավտոբուսային և 14 միկրոավտոբուսային երթուղիներ: Սրանցից այժմ չեն սպասարկվում 2 ավտոբուսային և 3 միկրոավտոբուսային երթուղիներ:

Ներքաղաքային երթուղիների սպասարկում իրականացվում են Գյումրի (2 ավտոբուսային և 12 միկրոավտոբուսային) և Արթիկ (մեկ միկրոավտոբուսային) քաղաքներում:

3. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 2016թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԾՐԱԳՐԻ II ՓՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Գյումրի

2016 թվականի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրված 616,5 մլն.դրամ գումարի շրջանակներում Գյումրի քաղաքում իրականացված ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարի համապատասխան հրամաններով բնակարանային ապահովման ծրագրի շահառու ճանաչված թվով 169 երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներից թվով
101-ին տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր, որոնք բոլորը ձեռք են բերել
բնակարաններ /ծախսվել է 615,6 մլն դրամ գումար/:

2017 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված է Գյումրի քաղաքում բնակարանային ապահովման ծրագրի շահառու ճանաչված ևս թվով 60 ընտանիքների տրամադրել բնակարանի գնման վկայագրեր:

գ.Ախուրյան

2016 թվականին Ախուրյան համայնքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, բնակարանային ապահովման ծրագրի շահառու հանդիսացող թվով 36 ընտանիքների տրամադրվել են բնակարանի գնման վկայ+ագրեր, որոնք բոլորը ձեռք են բերել բնակարաններ /ծախսվել է 195,6 մլն դրամ գումար/:

4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ <<ՄՈՒՇ-2>> ԵՎ <<ԱՆԻ>> ԹԱՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2010-2012թթ. <<Մուշ-2>> և <<Անի>> թաղամասերում շահագործման են հանձնվել 2812 բնակարաններ (60 շենքեր), որից.

երկրաշարժից անօթևան ընտանիքներին են հատկացվել 2791 բնակարաններ, որոնցից 2289 բնակարաններն արդեն իսկ սեփականաշնորհվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից: Դեռևս չեն սեփականաշնորհվել թվով 502 բնակարաններ:

Գործընթացը կշարունակվի մինչև 2016 թվականի դեկտեմբերի 1-ը:

2016 թվականին գյուղատնտեսության ոլորտում կատարված աշխատանքների մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյանը:

ՀՀ Շիրակի մարզում 2016թ. գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ նվազում /հա/
		2015թ.	2016թ.	
	Հացահատիկ	46665	48517	+1852
	այդ թվում՝ աշնանացան ցորեն	26428	27367	+939
	գարնանացան գարի	20237	21150	+913
	Կարտոֆիլ	4384	4568	+184
	Բանջարեղեն	1729	1900	+171
	Կերային մշակաբույսեր	14532	15651	+1119

	Տեխնիկական մշակաբույսեր	91	129	+38
Ընդամենը		67401	70765	+3364

2017թ. բերքի տակ ցանվել է 21710 հա աշնանացան ցորեն նախորդ տարվա 27367 հա-ի դիմաց, պակաս է ցանվել 5657 հա:

Մարզում սկսել են զբաղվել հնդկացորենի մշակությամբ, 2016թ. ընթացքում իրականացվել է 280 հա ցանք, որի միջին բերքը կազմել է 20 ց: Այժմ երբ Բավրա համայնքում շահագործման փուլին է հասել հնդկացորենի տարեկան 9000 տ հզորությամբ վերամշակման արտադրամասը, նոր հնարավորություններ են ստեղծվում ավելացնելու հնդկացորենի ցանքատարածությունները՝ հասցնելով այն մինչև 6000 հա:

Բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2015-2016թթ. ունի հետևյալ տեսքը.

հ/հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Միջին բերք /ց/		Համախառն բերք /տ/		Համախառն բերքի աճ /տոննա/
		2015թ.	2016թ.	2015թ.	2016թ.	2015թ.	2016թ.	
1.	Հացահատիկ	46665	48517	32.4	33.1	151238	157000	+5762
2.	Կարտոֆիլ	4384	4568	260.1	259	114023	117997	+3974
3.	Բանջարեղեն	1729	1900	319.4	298.8	55236	56614	+1378
4.	Պտուղ	505	527	188	152.8	9736	8095.5	-1604.5
5.	Խոտ	-	-	-	-	134978	142281	+7303

Բուսաբուծական մթերքների իրացումից ստացված համախառն եկամուտ՝

2016թ. 57.9 մլրդ դրամ
2015թ. 57.4 մլրդ դրամ
Աճ՝ 0.5 մլրդ դրամ

Սերմացուների բաշխման և վերադարձելիության ամփոփում.

<<Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիր>>.

2015-2016թթ. բարձր վերարտադրության (սուպեր էլիտա)

<<Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով>> 2015-2016 թվականներին ՀՀ Շիրակի մարզի ֆերմերային տնտեսություններին հատկացվել է.

	2015թ. /առաջին վերարտադրություն/	2015թ. /սուպեր էլիտա/	2016թ. /էլիտա/
սերմացու /տ/	1230	24	48
հողատարածք /հա/	4100	96	160
շահառուներ	64	8	21

2016թ. աշնանը աշնացան ցորենի առաջին վերարտադրության ծրագիր չի իրականացվել նախորդ տարիների պարտքերի չվճարման պատճառով: Նախորդ տարիներից կուտակված պարտքը կազմում է 118 մլն դրամ:

<<ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական ու կալիումական պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>> ծրագրի շրջանակներում 2015-2016թթ. մարզին հատկացվել է.

	2015թ.	2016թ.
Ազոտական պարարտանյութ /տ/	5252.5	5407.15 պարտք - 13.7 մլն դրամ (114 տ)
Ֆոսֆորական պարարտանյութ /տ/	14.55	63
Կալիումական պարարտանյութ /տ/	26.3	60

Դիզելային վառելանյութ /լիտր/	633164	990446

Պարարտանյութի խոշոր պարտք ունեցող համայնքներն են Բասեն, Բենիամին, Սարատակ, Վարդաքար, Մեղրաշատ, Ջաջուռ, Այգաբաց:

Հակակարկտային միջոցառումներ.

2016թ. կարկտահարության պատճառով տուժել են մարզի թվով 18 համայնքների գյուղացիական տնտեսությունների գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 4600 հա, վնասի չափը կազմել է մոտ 1.4 մլրդ դրամ, նախորդ տարվա 0.74 մլրդ դրամի դիմաց:

Մարզում 2016թ. ընթացքում տեղադրվել են 10 հակակարկտային կայանքներ՝ Վահրամաբերդ - 1, Կապս – 1, Քեթի - 1, Մեծ Մանթաշ - 2, Բյուրակն - 1, Ոսկեհասկ - 2, Հացիկ – 1, Մայիսյան – 1, Հովունի – 1: Այժմ մարզի թվով 28 համայնքներում գործում է 71 հակակարկտային կայանքներ:

Բազմակի կարկտահարված Կապս, Վահրամաբերդ, Հովունի, Մայիսյան, Մարմաշեն, Քեթի համայնքներին ԷՂՀ-ի կողմից տրամադրվել է աջակցության կարգով անվճար 220 տ աշնանացան ցորենի սերմացու, որն ամբողջությամբ բաշխվել է 853 գյուղացիական տնտեսությունների 4046 շահառուների ըստ վնասված ցանքատարածությունների հաշվարկով 1 հա-ի դիմաց 150 կգ սերմացու:

Անասնապահություն.

Գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառման արդյունքները ամփոփ տեսքով բերվում է ստորև ներկայացվող աղյուսակում /2015-2016թթ./.

	2015թ.	2016թ.	Աճ/նվազում (+/-)
Խ.ե.կ. /հազ. գլուխ/	107847	107910	+63
Որից՝ կովեր /հազ. գլուխ/	50603	49664	-939
Խոզեր /հազ. գլուխ/	12870	14771	+1901
Ոչխարներ և այծեր /հազ. գլուխ/	90527	93503	+2976

ՀՀ Շիրակի մարզում անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության 2015-2016թթ. ցուցանիշները.

Անասնաբուծական մթերք	Համախառն արտադրանք		Աճ/վնազում +/-
	2015թ.	2016թ. /սպասվող/	
Միս/հազ. տ/	23.8	24.9	+1.1
Կաթ/հազ. տ/	112.2	114.9	+2.7
Ձու/մլն հատ/	43	44.2	+1.2

Անասնապահական մթերքների իրացումից ստացված համախառն եկամուտ՝

2016թ. 53 մլրդ դրամ
2015թ. 52.1 մլրդ դրամ
Աճ 0.9 մլրդ դրամ

Գյուղատնտեսական մթերքների իրացումից ստացված համախառն եկամուտ՝

2016թ. 110.9 մլրդ դրամ
2015թ. 109.5 մլրդ դրամ
Աճ 1.4 մլրդ դրամ -1.26 %

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Շիրակի մարզպետ Հովսեփ Սիմոնյանը: Մարզխորհրդի նիստից հետո պարոն Սիմոնյանը և տեղակալները շնորհավորեցին համայնքների ղեկավարներին 2016 թվականին համատեղ աշխատանքի համար, ցանկացան միմյանց նորանոր հաջողություններ գալիք տարում: